# ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ



Ծնվել է 1902թ., Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի):

1917թ. սկսել է աշխատանքային գործունեությունը տեղի պարետային վարչությունում և միաժամանակ սովորել առևտրի ուսումնարանում:

Աշխատանքին զուգընթաց՝ սովորել և ավարտել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտը:

1928-1932թթ. աշխատել է Դնեպրոշինում, Լենինգրադում, հետո տեղափոխվել է Հայաստան, նշանակվել Քանաքեռշինի պետ և Քանաքեռ ՀԷԿ-ի տնօրեն:

1940թ. նշանակվել է Երևանի Կիրովի անվան գործարանի տնօրեն, այնուհետև՝ Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ:

1944թ. Ա. Ղազարյանն ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ և պաշտոնավարել մինչև 1945թ. ապրիլի 2-ը: